ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի գոտևորման փոփոությանը համաձայնություն տալու մասին որոշման նախագծի

Ավագանու որոշման նախագիծը կազմվել է Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 60-րդ և 64-րդ կետերի պահանջների համաձայն:

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Միեր Դավուդյանը Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 07-065-0014-0039 կադաստրային ծածկագրի 0,1191 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի մասով համայնքի տարածական պլանավորման փաստաթղի Քասախ գյուղի գոտևորման հատակագծում և տեքստային մասում՝ սահմանված հարկայնության ԲՆԿԳ 1/1-ը ԲՆԿԳ-1/2 գոտի փոխադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N N 2/փ-265 դրական եզրակացությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է փոփոխել հողամասի նպատակային նշանակությունը և արտացոլել այն Քասախ գյուղի գլխավոր հատակագծում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի գոտևորման փոփոխությանը համաձայնություն տալու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Միեր Դավուդյանին պատկանող հողամասի գոտևորման փոփոխության մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեում եկամուտների ավելացում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան